ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 66

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29-ը ապրիլի 2023թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 28-ը, որից 2-ը ZOOM հարթակի միջոցով:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Ա. Հ. Մակարյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թթ. ծրագրի իրականացման կարգի հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան**)

2. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան**)

3. ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի ու բովանդակության հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան**)

4. ԵՊՀ ԻՄ-ի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքի ու բովանդակության հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան**)

5. **Ընթացիկ հարցեր**

   5.1. ԵՊՀ ԻՄ-ում ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումների հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան**)

   5.2. ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կարգի (նոր խմբագրություն) հաստատում:

   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան**)

   5.3. ԵՊՀ ԻՄ-ում լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների իրականացման կարգի հաստատում:

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյան**)

5.4. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հետազոտական թեմաների հայտերի ներբուհական մրցույթում (2022թ. մարտի 12, որոշում 58/5) շահած հետազոտական թեմաների իրականացման մասին։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ **Ա. Մակարյան**)

5.5. ԵՊՀ ԻՄ որակի կառավարման հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար **Մ. Աթոյան**)

Բաց քվեարկությամբ՝ 28 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**.

ՈՐՈՇՈՒՄ

- Հաստատել նիստի օրակարգը։

Օրակարգի առաջին՝ «ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թթ. ծրագրի իրականացման կարգի հաստատում» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանին։

Ն. Գրիգորյանը նշեց, որ Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի փետրվարի 9-ի նիստում հաստատվել է պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման նոր՝ 2023-2026թթ. ծրագիրը և դրա իրականացման կարգը, որի հիման վրա ԿԲԴՎ բաժինը մշակել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թթ. ծրագրի իրականացման» կարգը (տես հավելված 1)։

Կարգում ներկայացված են ընդհանուր դրույթները, վերապատրաստման ծրագրի կազմակերպման և դասընթացներին դասախոսի մասնակցության, դասախոսի ատեստավորման կարգը, վերապատրաստման ծրագրի իրականացման ժամկետներն ու ֆինանսավորման աղբյուրները, պրոֆեսորադասախոսական կազմի 2023-2026թթ. վերապատրաստման ծրագիրը՝ հիմքերը, նպատակն ու խնդիրները, ակնկալվող կարողունակությունները, ծրագրի կառուցվածքը։

Նշվեց, որ ծրագրի շրջանակում ԵՊՀ ԻՄ-ի կազմակերպած վերապատրաստումներին դասախոսը մասնակցում է կամավոր, սա առաջին էական տարբերությունն է նախորդ կարգի համեմատ։ Կարելի է առանձնացնել նաև կարգի հետևյալ կետերը.

7-րդ կետ. Դասախոսի կողմից դասընթացի ընտրությունն ու դրան մասնակցությունը կատարվում են հետևյալ մեխանիզմներով.

1) դասախոսը լրացնում է առցանց ինքնագնահատման հարցաշար՝ կազմված ծրագրի Աղյուսակ 1-ում ընդգրկված բաղադրիչների հիման վրա, ինչի միջոցով բաժինը բացահայտում է դասախոսի ուժեղ և թույլ կողմերը, վերապատրաստման կարիքները, այնուհետև անհատական խորհրդատվության միջոցով ձևավորվում է դասախոսի վերապատրաստման անհատական փաթեթն ու ժամանակացույցը,
2) դասախոսը մասնակցում է վերապատրաստման անհատական փաթեթով ու ժամանակացույցով նախատեսված դասընթացներին ու ատեստավորման արդյունքում հավաքում է միավորներ:

8-րդ կետ. Ծրագրի շրջանակում ձևավորվող առավելագույն ընդհանուր միավորը 30-ն է: 2022 թվականի ընթացքում դասախոսի մասնակցած դասընթացներից հավաքած ու ատեստավորման հանձնաժողովի կողմից հաստատված միավորները ևս հաշվարկվում են ծրագրի շրջանակում:

9-րդ կետ. Միավորները կարող են ձևավորվել նաև դասախոսների ատեստավորման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հաստատած ցանկում ընդգրկված այլ կազմակերպությունների կողմից անցկացված վերապատրաստման դասընթացների միջոցով:

13-րդ կետի համաձայն՝ դասախոսի անհատական ծրագիրն ավարտվում է ամփոփիչ կամավոր ատեստավորմամբ:

14-րդ կետի համաձայն՝ ատեստավորման կարգն ու պայմանները սահմանվում են առանձին ատեստավորման ընթացակարգով, որն ընդունվում է ատեստավորող հանձնաժողովի կողմից:

18-րդ կետի համաձայն՝ ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի ատեստավորում անցած և 20 միավորը հաղթահարած հիմնական դասախոսի մեկ դրույք աշխատավարձը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $Ա_Հ$=$Ա_Ն$*(1.2+(Մ-20)*0.02):

19-րդ կետի համաձայն՝ ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական համակազմի ատեստավորում անցած և 20 միավորը հաղթահարած, ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսի ամսական աշխատավարձը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝
$Ա_Ժ$ = $Ա_{ժամ}$*Ժ*(1.2+(Մ-20)*0.02),

21-րդ կետով՝ Դասախոսի հաստիքային դրույքաչափի բարձրացումը տեղի է ունենում ատեստավորմանը հաջորդող ֆինանսական տարվա սկզբին:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մակարյանը, ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ժ/պ բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբոնի վարիչի ժ/պ Ա. Հովակիմյանը և այլք:

Մասնավորապես Ա. Մակարյանը կարևորեց այն հանգամանքը, որ ծրագրի շրջանակում ԵՊՀ կամ ԻՄ-ի կազմակերպած վերապատրաստումներին դասախոսը մասնակցում է կամավոր, բոլորը կարող են մասնակցել անկախ կարգավիճակից, յուրաքանչյուրի համար կազմվելու է անհատական պլան՝ հարցումների միջոցով, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական համակազմի ատեստավորում անցած և 20 միավորը հաղթահարած դասախոսների համար սույն կարգով նախատեսվում է աշխատավարձի բարձրացում մինչև 30%:

Ռ. Բարխուդարյանը նշեց, որ եթե անձը անցել է վերապատրաստում այլ հիմնարկում, ունի հավաստագիր, որը կհամապատասխանի ԵՊՀ չափանիշներին և բովանդակությանը, ապա տվյալ հավաստագիրը կընդունվի որպես հիմք տվյալ վերապատրաստումը ճանաչելու համար:

Բաց քվեարկությամբ՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 66/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման 2023-2026 թվականների ծրագրի իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Օրակարգի երկրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին» հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը:

Մ. Ճաղարյանը նշեց, որ, առաջնորդվելով Մասնաճյուղի 2022-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրի 1.2.4. (Պարբերաբար իրականացնել ուսանողների կրթական կարիքների գնահատում) գործողության կատարման անհրաժեշտությամբ, ՄԿՈԱ բաժինը 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո ուսումնասիրել է 1-ին կիսամյակի հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը:

Հարցմանը մասնակցել են հետազոտական աշխատանք իրականացրած 275 ուսանողներից 196-ը (71%), որը մասնակցության բավականին բարձր ցուցանիշ է (նախորդ ուստարվա 30% մասնակցության համեմատ)։ Հարցմանը մասնակցած ուսանողների 90%-ը կատարել և ներկայացրել է հետազոտական աշխատանքը, ավելի քան 80%-ը մասնակցել է թեմաների առաջադրմանը, 38%-ի համար հետազոտական աշխատանքի թեման նախասիրությունների շրջանակներում է եղել, 45%-ի համար եղել է ուղղակի հետաքրքիր թեմա, իսկ 17%-ի համար՝ պարզապես հանձնարարություն։ Այսինքն, ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հետազոտական աշխատանքները ղեկավարող մեր դասախոսական կազմին հաջողվել է թեմաները ընտրել ուսանողների մոտ 83%-ի հետաքրքրությունների շրջանակներում (նախորդ ուստարում՝ 69%)։ Հետազոտական աշխատանքների իրականացումն ուսանողների համար եղել է ձեռքբերումային, ինչի մասին փաստել են ուսանողները՝ նշելով, որ ստացել են նոր գիտելիքներ (67%), ձեռք բերել ինքնուրույն աշխատելու (64%), դատողություններ և եզրակացություններ անելու (51%) ունակություններ, վերլուծելու (53%) կարողություններ, և այդ ցուցանիշները նախորդ ուստարվա արդյունքներին չեն զիջում և որոշ պարամետրերում բարելավվել են։ Ուսանողների միայն 46%-ն է նշում, որ ձեռք է բերել մասնագիտական հմտություններ։ Ուսանողների 81%-ը ծանոթ է եղել հետազոտական աշխատանք կատարելու մեթոդաբանությանը, 19%-ը մասամբ է ծանոթ եղել, և ուրախությամբ կարող ենք նշել, որ չենք ունեցել հարցման մասնակից ոչ մի ուսանող, ով տեղեկացված չի եղել աշխատանքի կատարման մեթոդաբանությանը։

Վերլուծված արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների մոտ բավականին լավ է ստացվել ինքնուրույն հավաքել անհրաժեշտ տեղեկատվությունը (մասնակիցների 72%-ի մոտ), օգտվել անհրաժեշտ գրականությունից (77%-ի մոտ), ներկայացնել ձեռք բերված արդյունքները (86%-ի մոտ), անգամ ձևակերպել եզրակացությունները (74%-ի մոտ) և ներկայացնել կատարած աշխատանքը (89%-ի մոտ)։ Այստեղ պետք է առանձնացնել մշտապես մտահոգիչ խնդիրը՝ կապված աշխատանքի պլանավորման, նպատակի ու խնդիրների ձևակերպման, թեմայի արդիականության և նշանակության գնահատման խնդիրների հետ։ Այսինքն, ուսանողների հիմնական դժվարությունները կապված են աշխատանքի նախնական կազմակերպման և հետագա գործունեությունն ու տվյալ աշխատանքից ակնկալիքները հստակեցնելու հետ։ Այդ ցուցանիշները ցածր չեն, համապատասխանաբար՝ 58% (նախկին ուստարում՝ 57%), 64% (51%), 69% (55%)։

Հարցմանը մասնակցած ուսանողների 97%-ը տեղեկացված է եղել աշխատանքի գնահատման չափանիշներից, որից 84%-ին ներկայացրել են դասախոսները։ Հարցմանը մասնակցած ուսանողների 54%-ը գտնում է, որ գնահատման չափանիշները ճիշտ են

ընտրված, 43%-ի համար դրանք մասամբ են ճիշտ ընտրված, ինչի մասին իրենք նաև արտահայտվել են բաց հարցերում: Ուսանողների 89%-ի համար իրենց ստացած գնահատականը համապատասխանում է կատարած աշխատանքին:

Մ. Ճաղարյանի ամբողջական հաշվետվությունը կարող եք տեսնել հավելված 2-ում:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ Գ. Հովհաննիսյանը, Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Հովակիմյանը և այլք:

Մասնավորապես կարևորվեց ամբիոնների և ՄԿՈԱ բաժնի սերտ համագործակցության հանգամանքը, ուսանողների կողմից բարձրացված խնդիրների բուն էությունը բացահայտելու և լուծումներ տալու համար:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

1. ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի զեկույցը «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին» ընդունել ի գիտություն:
2. Մանրամասն հաշվետվությունն ուղարկել ԵՊՀ ԻՄ համապատասխան ստորաբաժանումներին:

Օրակարգի երրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի ու բովանդակության հաստատում» հարցի մասին լսեցին ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանի հաղորդումը:

Ն. Գրիգորյանը նշեց, որ ԵՊՀ-ի գիտական խորհրդի մարտի 23-ի թիվ 9-ը նիստում քննարկվել և հաստատվել է ԵՊՀ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (ղեկավար ձեռնարկը), որը սահմանում է բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունն ու ուսանողի բեռնվածությունը: Նոր պահանջներով բավականին փոփոխություններ են տեղի ունենալու, կրճատվել է ուսանողների լսարանային շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 1-4-րդ կիսամյակներում՝ 22 ժամ, իսկ 5-7-րդ կիսամյակներում՝ 20 ժամ: Սահմանափակվում են դասընթացների քանակը ըստ կիսամյակների, 1-4-րդ կիսամյակներում ընդհանուր դասընթացների թիվը չպետք է գերազանցի 7-ը, 5-րդ կիսամյակում՝ 6-ը, 6-8-րդ կիսամյակներում՝ 5-ը (ներառյալ պրակտիկաները): Պակասել են ընդհանուր կրթամասի աշխատածավալը՝ 27 կրեդիտ, հետևաբար բարձրացվել է մասնագիտական կառուցամասի կրեդիտները՝ 213 կրեդիտ(տես հավելված 3):

Ընդհանուր կրթական կառուցամասը ներառում է պարտադիր ու կամընտրական դասընթացներ: Ընդհանուր կրթական կառուցամասի մի քանի դասընթացների՝ օտար լեզու, ռուսաց լեզու, փիլիսոփայության հիմունքներ, քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն, կրեդիտները և համապատասխանաբար նաև լսարանային ժամերը կրճատվել են: Մասնագիտական կառուցամասը ներառում է 3, 6 կամ 9 կրեդիտ աշխատածավալով պարտադիր, կամընտրական, հատուկ մասնագիտական, հարակից կրթական ծրագրերից ընտրվող դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ՝ պրակտիկա(ներ) ու 12 կրեդիտ ծավալով ավարտական աշխատանք: Շատացել են կամընտրական մասնագիտական դասընթացներին տրվող կրեդիտները՝ կամընտրական մասնագիտական դասընթացների ընդհանուր աշխատածավալը 48 կրեդիտ է, որից 12-18 կրեդիտը նախատեսված է հարակից դասընթացների համար (տե՛ս կարգի 17-րդ կետը): Առաջարկվող դասընթացները պետք է ներկայացվեն կրկնակի թվով: Դրանց ընտրությունն իրականացվելու է գրանցումների էլեկտրոնային համակարգում (ռեգիստրար): Կամընտրական մասնագիտական դասընթացներն իրականացվում են 5-8-րդ (հեռակա ուսուցման դեպքում՝ 7-10-րդ) կիսամյակներում: Նշենք, որ Կրթական բարեփոխումների և դասախոսների բաժինը առաջարկվող փաստաթղթում Մասնաճյուղի մի քանի կրթական ծրագրերի պարագայում հանդիպել է որոշակի խնդրի, որը բարձրացվել է ԵՊՀ ռեկտորատում և ուսումնամեթոդական վարչությունում և ԵՊՀ ղեկավարության կողմից ստացել ենք համաձայնություն՝ կարգը համապատասխանեցնել մեր ծրագրային առանձնահատկություններին՝ մասնավորապես այն կրթական ծրագրերում, որում ընդհանուր կրթամասում առկա դասընթացների երկու մասնագիտական դասընթաց են, պետք է դրանց հատկացվող 4 կրեդիտը տեղափոխվի մասնագիտական կրթամաս՝ երկու հատ երկու կրեդիտ արժեքով դասընթացի տեսքով:

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը, ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը , ՌՈՄՎ պետ Ա. Դավթյանը և այլք:

Մասնավորապես **Ա. Մակարյանը** նշեց, որ ԵՊՀ համապատասխան կարգը բավականին ընդհանուր է, ԵՊՀ-ն մեզ թույլատրել է կատարել որոշակի փոփոխություններ՝ Մասնաճյուղի կրթական ծրագրերին համապատասխան: Կարգը քննարկվել է ՄԿՈԱ, ԿԲԴՎ, ՈԻՄՎ և այլ ստորաբաժանումներում, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ որակի կառավարման մշտական հանձնաժողովում, իսկ կատարված փոփոխությունները հիմնականում պայմանավորված են Մասնաճյուղում առկա մանկավարժական որակավորում տվող կրթական ծրագրերի առկայությամբ:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց.***

ՈՐՈՇՈՒՄ N 66/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (ղեկավար ձեռնարկ)՝ համաձայն հավելվածի 3-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Օրակարգի չորրորդ՝ «ԵՊՀ ԻՄ-ի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքի ու բովանդակության հաստատում» հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանի հաղորդումը։

Ն. Գրիգորյանը նշեց, որ ԵՊՀ -ի գիտական խորհրդի մարտի 23-ի թիվ 9-ը նիստում քննարկվել և հաստատվել է նաև ԵՊՀ-ի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության ղեկավար ձեռնարկը, որը սահմանում է մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը, ընդհանուր բովանդակությունն ու ուսանողի բեռնվածությունը։

Նա նշեց նաև, որ ներկա փաստաթուղթը էականորեն չի տարբերվում նախորդ տարվա փաստաթղթից և մենք ևս կառաջնորդվենք ներկայացվող ձեռնարկով (տես հավելված 4)։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 66/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ի մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (ղեկավար ձեռնարկ)՝ համաձայն հավելված 4-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ընթացիկ հարցեր։

5.1.Լսեցին « ԵՊՀ ԻՄ-ում ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումների հաստատում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ԿԲԴՎ բաժնի վարիչ Ն. Գրիգորյանի հաղորդումը։

Նա նշեց, որ ելնելով ԵՊՀ ԻՄ զարգացման 2022-2026թթ. ռազմավարական ծրագրի 1-ին նպատակի 1-ին խնդրի 1.2.՝ «Մրցունակ կրթական ծրագրեր»- Տրամադրել բարձրակարգ ակադեմիական գիտելիք և փորձառություն յուրաքանչյուր ուսանողին՝ երաշխավորելով ընդհանրական և մասնագիտական կարողություններ և ապահովելով կրթության շարունակականություն, 7-րդ գործողության իրականացման հանձառությունից՝ Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի կողմից մշակվել է «Ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ» (տես հավելված 5)։ Մեթոդական ցուցումներում ներկայացված է 21 ինքնուրույն աշխատանքի ձևեր, այդ աշխատանքների կատարման ժամանակ ուսանողի և դասախոսի դերը, պարտականություններն ու աշխատանքի գնահատման չափանիշները։

Ներկայացված ուղեցույցը ներկայացվել է Որակի կառավարման հանձնաժողովի անդամներին, քննարկվել և հավանության է արժանացել։

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը, ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք։

Մասնավորապես Ա. Մակարյանը նշեց, որ ներկայացվող ցուցումները շատ օգտակար կարող են լինել և՛ ուսանողների, և՛ դասախոսների համար, կան բազմաթիվ ինքնուրույն աշխատանքների սահմանումներ։ Ներկայացված ուղեցույցը անցել է բոլոր անհրաժեշտ ստորաբաժանումներով և որակի կառավարման մշտական հանձնաժողովով։

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ շատ օգտակար աշխատանք է կատարվել։

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 66/4

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումները՝ համաձայն հավելված 5-ի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

5.2.Լսեցին « ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կարգի (նոր խմբագրություն) հաստատում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը։

Մ. Ճաղարյանը նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կարգի (նոր խմբագրությամբ) հաստատման ներկայացված փաստաթուղթը ԵՊՀ ԻՄ-ի՝ 2014թ. հոկտեմբերի 17-ի գիտխորհրդի նիստում հաստատված և 2023թ. մարտին ԵՊՀ ԻՄ-ի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կողմից վերանայված ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կանոնակարգն է:

Այն վերանայել է ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժինը՝ հիմք ընդունելով ամբիոնների վարիչների հետ քննարկումների ընթացքում բարձրաձայնված խնդիրը՝ կապված գործող կանոնակարգի Հավելված 1-ում ներկայացված դասալսման հարցաթերթում ներառված հարցերի մեծ քանակության հետ: Ներկայացված դասալսման հարցաթերթի և արդյունքների վերլուծության գրանցման թերթի վերջնական տարբերակը կազմվել է ամբիոններում իրականացված քննարկումների միջոցով հավաքագրված առաջարկությունների հիման վրա: Հարցաթերթից բացի՝ վերանայվել է նաև կանոնակարգը, և դրանում կատարվել են համապատասխան փոփոխություններ (տես հավելված 6):

Արտահայտվեցին՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանը, ԵՊՀ գիտական հարցերի գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ ա.գ.թ., դոցենտ Գ. Հովհաննիսյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժ/պ ք.գ.թ., դոցենտ Գ. Սիմոնյանը և այլք:

Գ. Սիմոնյանը նշեց, որ իրենք նույնպես մասնակցել են քննարկումներին, հարցերը դարձել են առավել կոմպակտ և արդյունավետ, դյուրացվել է նաև ամբիոնի վարիչի հաշվետվությունը դասալսումների վերաբերյալ:

Ա. Մակարյանը նշեց, որ յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ունենա հակադարձ կապի մեխանիզմ, որպեսզի ստիպի կարգին աշխատել, անհրաժեշտ է կարգում, որպես դասալսող, ավելացնել կրթական ծրագրի ղեկավարներին:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ կարելի է դասալսումներին տրվող ժամաքանակները կրկնապատկել:

Ռ. Բարխուդարյանը նշեց, որ բոլոր աշխատանքները հնարավոր չէ գրել թղթի վրա:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 66/5

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կարգը (նոր խմբագրություն)՝ համաձայն հավելված 6-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5.3.Լսեցին «ԵՊՀ ԻՄ-ում լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների իրականացման կարգի հաստատում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ ՄԿՈԱ բաժնի վարիչ Մ. Ճաղարյանի հաղորդումը:

Մ. Ճաղարյանը նշեց, որ տվյալ կարգը ևս մշակել է ՄԿՈԱ բաժինը՝ ելնելով ԵՊՀ ԻՄ-ի՝ 2022-2026 թթ. զարգացման ՌԾ-ի 3-րդ նպատակի (Հանրային ներգրավում) 3.1 խնդրի (Լրացուցիչ կրթական ծրագրեր) գործողությունների իրականացման պահանջներից: Փաստաթուղթը մշակվել է «Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման» և «Ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման» ՀՀ կարգերի (ՀՀ կառավարության 10 սեպտեմբերի 2015 թվականի N 1062-Ն Որոշում) հիման վրա: Այն սահմանում է լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման, ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման ընթացակարգը: Նա նշեց նաև, որ Մասնաճյուղում լրացուցիչ կրթական ծրագրեր իրականացնելու նպատակն է զարգացնել Մասնաճյուղի հանրային ներգրավվածությունը, աջակցել տարածաշրջանի հասարակության լայն խավերին, հնարավորություն տալ ձևավորելու, կատարելագործելու, արդիականացնելու և լրացնելու մինչ այդ ձեռք բերած իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները (տես հավելված 7):

Արտահայտվեց՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա.Մակարյանը:

Նա նշեց, որ մինչև հիմա ԵՊՀ ԻՄ-ը չի կազմակերպել լրացուցիչ կրթական ծրագրեր, համապատասխան կարգ չենք ունեցել, և այս առումով փորձ չունենք: Ներկայացված կարգում մանրամասն գրված է թե ինչպես պետք է իրականացնել լրացուցիչ կրթական ծրագրերը:

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***՝

ՈՐՈՇՈՒՄ N 66/6

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղում լրացուցիչ կրթական ծրագրերի և դասընթացների իրականացման կարգը՝ համաձայն հավելված 7-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

5.4. Լսեցին «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հետազոտական թեմաների հայտերի ներբուհական մրցույթում (2022թ. մարտի 12, որոշում 58/5) շահած հետազոտական թեմաների իրականացման մասին» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանի հաղորդումը:

Նա նշեց, որ ընդհանուր առմամբ ունեցել ենք 5 թեմա, 18 մասնակից, որից 5-ը ուսանող, հատկացվող գումարը՝ 3 միլիոն դրամ, որից վճարվել է 1,8 միլիոն դրամը.

1. Թեմա «Տավուշի մարզում օրգանական գյուղատնտեսության զարգացման հեռանկարները» **Սիմոնյան Գևորգ**, անդամների **թիվը՝ 3,** գումարը՝ **500.000** դրամ

- Առաջին հաշվետվություն՝ առկա է
- Ամփոփ հաշվետվություն՝ առկա է
- Հոդվածներ՝ առկա են
- Վճարվել է՝ ըստ պայմանագրի

2. Թեմա «Տավուշի մարզի որոշ հանրակրթական դպրոցների, հյուրատների և բուժհիմնարկների շրջակայքում աղմուկի ուսումնասիրություն», **Ալեքսան Մարգարյան**, անդամների թիվը՝ **3,** գումարը՝ **550.000** դրամ

- Առաջին հաշվետվություն՝ առկա է
- Ամփոփ հաշվետվություն՝ առկա է
- Հոդվածներ՝ առկա են
- Վճարվել է՝ ըստ պայմանագրի

3. **Թեմա** «Տավուշի մարզի ջերմատնային տնտեսությունների համար ինֆորմացիոն ցանցի մշակում» , **Յոլչյան Ռոբերտ,** անդամների թիվը՝ 4, գումարը՝ 750 000 դրամ,

- Առաջին հաշվետվություն՝ առկա է
- Ամփոփ հաշվետվություն՝ առկա է
- Հոդվածներ՝ առկա են
- Վճարվել է՝ ըստ պայմանագրի

4. Թեմա «Իջևանի հասարակական-մշակութային կյանքը առօրեականության համատեքստում 1920-1970-ական թվականներին», **Ազատյան Արա,** անդամների թիվը՝ **5,** գումարը՝ 70**0.000** դրամ

- Առաջին հաշվետվություն՝ առկա չէ
- Ամփոփ հաշվետվություն՝ առկա է
- Հոդվածներ՝ առկա են

- Չի վճարվել՝ կան տեխնիկական խնդիրներ

5. **Թեմա** «Տավուշի մարզի գյուղական տարաբնակեցման զարգացման արդի միտումները և առկա հիմնախնդիրները», **Պոտռոյան Ակսել,** անդամների թիվը՝ 3, գումարը՝ 50**0.000 դրամ,**

- Առաջին հաշվետվություն՝ առկա է
- Ամփոփ հաշվետվություն՝ առկա է
- Հոդվածներ՝ չկան
- Չի վճարվել՝ կան տեխնիկական խնդիրներ

Ա. Մակարյան նշեց, նաև, որ չնայած այն հանգամանքին, որ տրվող գումարները փոքր են համեմատած ԵՊՀ-ի դրամաշնորհների, պետք է ներկայացվող պահանջներն ավելի հստակեցնենք և ավելի արդյունավետ աշխատենք։ Ա. Մակարյանը կարևորեց նաև թեմաներում ԵՊՀ ԻՄ ուսանողների ներգրավվածությունը։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ

- ԵՊՀ ԻՄ տնօրենի ժ/պ Ա. Մակարյանի զեկույցը «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հետազոտական թեմաների հայտերի ներբուհական մրցույթում (2022թ. մարտի 12, որոշում 58/5) շահած հետազոտական թեմաների իրականացման մասին›› հարցի վերաբերյալ ընդունել ի գիտություն:

5.5.Լսեցին «ԵՊՀ ԻՄ որակի կառավարման հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարելու մասին›› հարցի վերաբերյալ լսեցին ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղար Մ. Աթոյանի հաղորդումը։

Բաց քվեարկությամբ՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշվեց***

ՈՐՈՇՈՒՄ N 66/7

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 16-րդ կետի 16-րդ ենթակետով, ինչպես նաև «Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի կանոնակարգի 2.1 կետը՝ «Երևանի պետական համալսարան›› հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմից հանել Արման Սպարտակի Եգանյանին։
2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողովի կազմում հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի օտար լեզուների ամբիոնի ասիստենտ Ռաֆայել Գառնիկի Հարությունյանին։
3. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ